



«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

Արագածոտնի մարզպետ Աշոտ Մխմեդյանին
HETQ.am-ի լրագրող Դիանա Ղազարյանից

(Էլ-փոստ՝ diana1khazaryan@gmail.com,
հեռ.՝ 098-74-16-15)

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ ամբողջական տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Աշտարակ քաղաքի Երևանյան փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող մարզադպրոցը մինչ «Սևան» մարզական ՀԿ-ին տրամադրելը արդյո՞ք մարզադպրոցը ըստ նպատակի գործունեություն ծավալել է:

2. Մարզադպրոցում ի՞նչ ներդրումներ է նախատեսել կատարել «Սևան» մարզական հասարակական կազմակերպությունը:

3. Ինչպես՞ է որոշվել ներդրումների՝ 3 միլիոն դրամ չափը և ի՞նչ է նախատեսում իրականացնել այդ գումարով:

4. Ի՞նչ հանգամանքով է որոշվել ՀԿ-ի կողմից կատարվող ներդրումների չորս տարի ժամկետը:

5. Մարզադպրոցնում ի՞նչ գործունեություն է նախատեսել իրականացնել ՀԿ-ն:

6. Արդյո՞ք ՀԿ-ն պարտավորվել է այդ 50 տարիների ընթացքում շենքը շահագործել միայն որպես մարզադպրոց: (Եթե, այո, կից ներկայացնել փաստաթուղթը):

Կանխավ շնորհակալ եմ՝

Դիանա Ղազարյան

7 օգոստոս 2017

7 08 2017
5/5844617



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 38 35
 0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 38 35
 0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 38 35 e-mail aragatsotn@mta.gov.am

Ձեր 07.08.2017թ գրության
 _____N_____

**„ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ,,
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
 ԼՐԱԳՐՈՂ ԴԻԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ**

ՀՀ կառավարության 2007թ սեպտեմբերի 6-ի թիվ 997-Ն որոշմամբ՝ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Արագածոտնի մարզպետարանին հատկացված 30 մլն. դրամ գումարով „Պետական գնումների գործակալություն,, ՊՈԱԿ-ի 2007թ նոյեմբերի 8-ի թիվ ՄԲԱՊՁԲ-07/45 գնման պայմանագրով ձեռք է բերվել Աշտարակ քաղաքի սպորտ դպրոցի կիսակառույց շենքը, որպես պետական սեփականություն համարվող անշարժ գույք: Ձեռք բերման տարվանից մինչև օրս մարզպետարանի կողմից մարզադպրոցի կիսակառույց շենքի վրա վերանորոգման և վերականգնման աշխատանքներ չեն կատարվել: 2009թ-ից մինչև 2016թ վերանորոգման և վերականգնման աշխատանքները կատարվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության „Քաղաքաշինական ԾԻԳ,-ի կողմից 493 մլն. դրամ գումարի չափով:

ՀՀ կառավարության 2017թ հունիսի 20-ի թիվ 761-Ա որոշմամբ մարզպետարանի տնօրինության տակ գտնվող Աշտարակ քաղաքի կիսակառույց մարզադպրոցը հանձնվել է ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

Ձեր բարձրացված հարցերում թե „Սևան,, մարզական հասարակական կազմակերպությունը ինչ ներդրումներ է նախատեսել, ինչպես պետք է իրականացնել այդ գումարները և ինչ պարտավորություններ ունի չորս տարիների ընթացքում, կարող եք իմանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունից, մարզպետարանը նման տեղեկատվության չի տիրապետում:

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ